ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻԼԻԿՅԱՆ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ուրախալի է, որ ի վերջո Կիլիկիայի հայկական դրամները ճանաչության առարկա են դառնում մեզանում նաև: Այդ դրամների ճանաչության կարիքը զգալով մեծանում է: Սակայն իմ այս համակը ճշգրտակ ուսի սխալներից զերծ պահելու հետաքրքրվող հոդվածները: Խոսքը վերաբերում է ամսագրի 1985 թ. № 11-ի մեջ (էջ 54—58) տպված «Կիլիկյան հայկական դրամների շրջանառությունը Հայաստանում» վերնագիրը կրող հոդվածին: Իրողությունն այն է, որ հոդվածագիրները (Հ. Սարգսյան, Մ. Կարապետյան) վկայակոչում են Հայաստանում եզակի օրինակներով գտնված կիլիկյան հայոց դրամներից ընդամենը վեց նմուշ և շանում են փաստել դրանց շրջանառության հավանականությունը Հայաստանում XIII—XIV դարերում:

Ըստ էության, դրամագիտական տվյալներով դրամական շրջանառության հարցերը կարող են առաջ քաշվել, եթե առկա են՝ 1. դրամների տարածման մասսայականությունը, 2. շերտագրված պեղածո դրամները, 3. դրամական գանձերը՝ բաղկացած ինքնուրույն առարկա դրամներից: Երբ հիշյալ տվյալները բացակայում են, ապա անկարելի է խոսել շրջանառության մասին:

Եվ այսպես, վկայակոչված դրամներից միայն մեկն է արծաթ, որը միջազգային առևտրում կարող էր ընդունվել ամենուրեք, սակայն այդ մեկ հատիկը պատահական երևույթ է և, Մեծ Հայքում տարածված լինելու մասսայական բնույթ չկրելով, հնարավորություն չի ընձեռում դատելու Հայաստանի և Կիլիկիայի միջև եղած դրամական կապի մասին:

Ինչ վերաբերում է հինգ պղնձե դրամներին, ապա դրանք ևս մասսայական տարածում չեն ունեցել, բացառությամբ մեկի: Մնացած չորսը զուրկ են պեղումների շերտագրության լիարժեք տվյալներից. հետևապես, մնում են դասելի պատահական օրինակների շարքը: Ավելին, շուրջ երեք հարյուր տարիների ընթացքում մայր Հայաստանում, ինչպես նաև Հայաստանին մերձակա անդրկովկասյան շրջաններում չեն հայտնաբերվել դրամական գանձեր կամ թեկուզ և մեկ դրամական գանձ՝ բաղկացած Կիլիկիայի հայկական դրամներից, կամ որևէ դրամական դանձ, որի կազմում եղած լինեին Կիլիկիայի հայոց թագավորության դրամների նմուշներ, անգամ՝ մեկ հատիկ դրամ: Նշանակում է, մասնագիտական առումով հոդվածը դրամների «շրջանառություն» գնահատանքով վերնագրելը հեռու է հիմնավոր լինելուց: Հայտնի է նաև, որ Կիլիկիայում Լևոն Առաջինի և նրա հաջորդների օրոք արծաթե դրամները բողարկվում էին զանգվածաբեն: Հայաստանում այդ ժամանակներում (XIII—XIV դարերում) շրջանառության մեջ էին մոնղոլական, Փոքր Ասիայի սելջուկյան, հուլաղույան ու չելաիրյան արծաթե դրամները: Այդ դրամական խմբերի մեջ կիլիկյան ծագում ունեցող հայկական արծաթե դրամներից միավորներ դեռևս չեն հայտնաբերվել: Հետևապես, Կիլիկիայի հայկական դրամների՝ Հայաստանում և Անդրկովկասում ունեցած «շրջանառության» մասին դատելն այդ առումով ևս զուրկ է հիմքից:

ԽԱՉԱՏՈՒՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր